ՎՐԱՍՏԱՆ

«ՖՐԱՆՏԱՆՈ» (ՆԱԽԱՐՈՏՅԵԼՈՎ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 7 - 8 (16203) ՇԱԲԱԹ, 25 ՀՈՒՆՎԱՐԻ 2014 Թ. ԳԻՆԸ՝ 25 ԹԵԹՐԻ

ԳԱԳԱԹԱԺՈՂՈՎ

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՀՈՒՍՈՎ ԵՆՔ, ՈՐ ՄԵՐ ԱՐՏԱԴՐԱՆՔԸ ԼԱՅՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՆԵՆԱ ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ»

Ինչպես արդեն հաղորդել ենք, Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին Դավոսում մասնակցեց Համաշխարհային տնտեսական գագաթաժողովին: Գագաթաժողովի շրջանակներում, Վրաստանի վարչապետը ելույթ ունեցավ «Եվրասիայի հաջորդ սահմանը» նստաշրջանում:

Վարչապետի խոսքերով, Վրաստանը հուսով է, որ իր արտադրանքը լայն ընդունելություն կունենա Եվրամիության շուկայում:

Վարչապետն իր ելույթում խոսեց Վրաստանում իրադարձությունների զարգացման մասին՝ նշելով, որ տարիներ տեւող նահանջից հետո երկրում քաղաքական իրադարձությունները ներկայումս աչքի են ընկնում դինամիկությամբ, իսկ էկոնոմիկան դառնում է առավել կայուն: «Վերջին

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԷԿՈՆՈՄԻԿԱ

«ՄԵՐ ԿԱՆԽԱԳԾՈՒՄԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՅՈՒՅԱՆԻՇԻՑ ՅԱՇՐ Է»

Ինչպես հայտարարեց Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին, 2014 թվականի բյուջեով ծրագրված ՀՆԱ-ի 5 տոկոսանոց աճի ցուցանիշը լրիվությամբ իրատեսական է եւ կատարելի:

Լրագրողների հետ հանդիպմանը վարչապետը նշեց, որ կառավարության ծրագրած ցուցանիշը ավելի ցածր է, քան Համաշխարհային բանկի կողմից հրապարակած տվյալը: Նշենք, որ Համաշխարհային բանկի փորձագետների հաշվարկներով, 2014 թվականի համար վրացական էկոնոմիկան կաճի 6,3 տոկոսով:

«Հիշեցնենք, որ անցյալ տարի մեզ մոտ նկատվեց էկոնոմիկայի աճի տեմպի նվազեցում եւ ոչ թե կրճատում: Այսպիսով, 5 տոկոսի մեր կանխագծումը լրիվությամբ իրատեսական է»,- հայտարարեց Ղարիբաշվիլին: Նրա խոսքերով, անցյալ տարի ՀՆԱ-ի նույնիսկ ոչ բարձր աճի պայմաններում Վրաստանը տարածաշրջանում մնում էր

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՎԱՐՉԱՊԵՏԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ՅՈՒՅԱՆԻՇՆԵՐԸ

Հունվարի 20-ին, կառավարության տնտեսական խորհրդի նիստում, ֆինանսների նախարար Նոդար Խադուրին վարչապետին ներկայացրեց տնտեսական աճի ցուցանիշները:

Ֆինանսների նախարարի խոսքերով, հոկտեմբերին տնտեսական աճը կազմել է 4,1 տոկոս, նոյեմբերին՝ 8,1 տոկոս, իսկ դեկտեմբերի նախնական տվյալներով՝ 8,5 տոկոս: Նոդար Խադուրու հայտարարությամբ, տարեկան տնտեսական աճը այսպիսով կազմում է 3,1 տոկոս:

«Մարտին կհստակեցվեն գյուղատնտեսության ցուցանիշները, ինչը, մեր հաշվարկներով, հնարավորություն կտա տնտեսական աճի տարեկան ցուցանիշը հավասարեցնել 3,5-3,6 տոկոսի: Հուսով ենք, որ աճի միտումը կշարունակվի, եւ Վրաստանում տնտեսական աճի վերաբերյալ Համաշխարհային բանկի 2014 թվականի համար կանխագծած 6,3 տոկոսանոց մակարդակը լրիվությամբ իրատեսական կդառնա»,- հայտարարեց Նոդար Խադուրին:

Ֆինանսների նախարարի հայտարարությամբ,

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՕՐԵՆՍԴԻՐ

ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔԸ ԿԸՆԴՈՒՆՎԻ ՓԵՏՐՎԱՐԻՆ

Հունվարի 24-ին Վրաստանի խորհրդարանը, երկրորդ ընթերցմամբ, ընդունեց ինքնակառավարման օրինանախագիծը: Օրինանախագծի դեմ հանդես եկավ խորհրդարանական ընդդիմությունը:

Իսկ մինչ այդ, Թբիլիսիի «Ռեդիսոն» հյուրանոցում ընտրական հարցերի հետ կապված համախմբակցային խմբի, դիվանագիտական կորպուսի հետ կայացած հանդիպմանը, Վրաստանի խորհրդարանի նախագահ Դավիթ Ուսուփաշվիլին հայտարարեց, որ օրինանախագծի վերջնական ընդունումը տեղի կունենա փետրվարի սկզբներին:

Դրան զուգահեռ, փետրվարի սկզբներին ծրագրվում է քննարկել ընտրական օրենսգրքի փոփոխությունը: Հաստատված աշ-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԳՈՏԻ

ՌՈՒՍՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ ՀԱՍՑՐԵՑԻՆ ՄԻՆՉԵՎ ԳԱԳՐԱ

Ռուսաստանի Դաշնության ղեկավարությունը որոշում է ընդունել հունվարի 20-ից մինչեւ մարտի 21-ը Փսոու գետի (վրաց-ռուսական սահմանագծի աբխազական հատված) Ռուսաստանի եւ Աբխազիայի այսպես կոչված պետական սահմանային գոտին 11 կիլոմետրով մինչեւ Գագրա խորացնելու վերաբերյալ:

Ըստ զանգվածային լրատվամիջոցների հաղորդումների, որոշման պատճառը Սուխումիում համարել են անվտանգության միջոցառումների խստացումը Սոչիի Օլիմպիական խաղերի անցկացման ժամանակամիջոցում:

Վերոնշյալ որոշման կապակցությամբ, իր դիրքորոշումը հայտնեց Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին: «Մենք կտրականապես բողոքում ենք այդ որոշման դեմ եւ պահանջում ենք միջազգային հանրության արձագանքը»,- հայտարարեց նա:

Գիորգի Մարգվելաշվիլին հայտարարեց, որ ո՛չ Վրաստանը, ո՛չ էլ միջազգային հանրությունը չեն հաշտվի Վրաստանի տարածքա-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

ԳԻՈՐԳԻ ՄԱՐԳՎԵԼԱՇՎԻԼԻՆ ԿԱՅՑԵԼԻ ԵՐԵՎԱՆ

Ծրագրվում է Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլու այցը Հայաստան: Այդ մասին հունվարի 22-ին հայտարարեց Հայաստանի ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը:

Նրա խոսքերով, 2013 թվականին Հայաստանը շարունակում է բարիդրացիական սերտ հարաբերություններ զարգացնել հարեւան երկրների՝ Վրաստանի եւ Իրանի հետ, չնայած, որ անցյալ տարի վերոնշյալ երեք երկրներում էլ անցկացվեցին նախագահական ընտրություններ:

Հայաստանի արտաքին գերատեսչության ղեկավարն ընդգծեց, որ Վրաստանի նախկին վարչապետ Բիձինա Իվանիշվիլին իր առաջին պաշտոնական այցը կատարեց Հայաստան, եւ այն բավականին արդյունավետ էր: Բացի այդ, Վրաստանի եւ Հայաստանի միջեւ հարաբերությունների խորացման վկայությունը նաեւ խորհրդարանների նախագահների հանդիպումն է, նախարարների մակարդակով փոխայցելությունները, հանդիպումները միջազգային կազմակերպությունների շրջանակներում:

ԱՅՑ

ՎՐԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ



Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին հունվարի 20-21-ին նախագահի կարգավիճակում իր անդրանիկ պաշտոնական այցով եղավ Թուրքիայում:

Այցի շրջանակներում, Վրաստանի նախագահը հանդիպումներ ունեցավ Թուրքիայի նախագահ Աբդուլլահ Գյուլի, վարչապետ Ռեջեփ Թայիբ Էրդողանի եւ խորհրդարանի խոսնակ Ջեմիլ Չիչեքի հետ:

Հանդիպումներում կողմերը քննարկեցին Վրաստան-Թուրքիա հարաբերությունների զարգացման հեռանկարները, միջազգային եւ տարածաշրջանային քաղաքականությանն առնչվող հարցեր:

Անկարայում Վրաստանի նախագահը հանդիպում ունեցավ նաեւ Թուրքիայի վրացական համայնքի ներկայացուցիչների հետ:

Այցի շրջանակներում Վրաստանի նախագահը այցելեց Օշկի եւ Իշխանի վանական համալիրներ եւ ծանոթացավ դրանց վերականգնման աշխատանքներին:

ՆՇԱՆԱԿՈՒՄ

ԳԻՈՐԳԻ ԲԱԴԱՇՎԻԼԻՆ՝ ՎՐԱՍՏԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

Վրաստանի գլխավոր դատախազ է նշանակվել 33-ամյա Գիորգի Բադաշվիլին, որը մինչեւ վերջին ժամանակներս աշխատում էր Գլխավոր դատախազության հետաքննչական բաժնի պետ:

Համապատասխան կարգադրությունը, արդարադատության նախարարի ներկայացմամբ, հունվարի 21-ին ստորագրել է Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին:

Գիորգի Բադաշվիլին ավարտել է Վրաստանի տեխնիկական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը: 2013 թվականի նոյեմբերից մինչ օրս զբաղեցրել է Գլխավոր դատախազության հետաքննչական բաժնի պետի պաշտոնը:

Բադաշվիլին իր կարիերան սկսել է Վրաստանի ֆինանսների նախարարության հետաքննչական ծառայությունում, որտեղ աշխատել է 2006 թվականից մինչեւ 2013 թվականի մայիսը: 2013 թվականի մայիսից մինչեւ նոյեմբեր նա Վրաստանի ՆԳ նախարարության հակակոռուպցիոն գործակալության փոխտնօրենն էր:

ՄԻՆԴԻԱ ՋԱՆԵԼԻՋԵՆ՝ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՕԳՆԱԿԱՆ

Ինչպես տեղեկացրել է Վրաստանի վարչապետի մամլո ծառայությունը, Մինդիա Ջանելիձեն նշանակվել է պետական անվտանգության հարցերով վարչապետի օգնական:

Նա նաեւ գլխավորելու է անվտանգության նոր մարմինը՝ վարչապետին առընթեր պետական անվտանգության եւ ճգնաժամերի կառավարման խորհուրդը: Վարչապետը խորհրդի հիմնման հրամանագիրն արդեն ստորագրել է, եւ հունվարի 21-ին խորհուրդն անցկացրեց իր անդրանիկ նիստը:

Հիշեցնենք, որ Վրաստանի նախագահին առընթեր գործում է Ազգային անվտանգության խորհուրդ:

ԳԱԳԱԹԱԺՈՂՈՎ

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՀՈՒՍՈՎ ԵՆՔ, ՈՐ ՄԵՐ ԱՐՏԱԴՐԱՆՔԸ ԼԱՅՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՆԵՆԱ ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

տարիներին վրացական էկոնոմիկայի վրա մեծ ազդեցություն էին գործում տարածաշրջանային նշանակության մի շարք իրադարձությունները, առկա էին ինչպես դրական, այնպես էլ՝ բացասական տեղաշարժեր»,- հայտարարեց նա:

Խոսելով դրական տեղաշարժերի մասին՝ Վրաստանի վարչապետն անդրադարձավ Եվրամիության հետ Ասոցիացման համաձայնագրին, ինչպես նաեւ համընդգրկուն եւ ազատ առեւտրի պայմանագրին: «Հուսով ենք, որ վերոնշյալ համաձայնագրերը կնպաստեն անմիջական ներդրումների հոսքի մեծացմանը»,- հայտարարեց Իրակլի Ղարիբաշվիլին:

Դավոսի համաշխարհային տնտեսական համաժողովի շրջանակներում, Վրաստանի վարչապետը հանդիպումներ ունեցավ տարբեր երկրների կառավարությունների ղեկավարների, միջազգային խոշոր ընկերությունների ներկայացուցիչների հետ:

ԷԿՈՆՈՄԻԿԱ

«ՄԵՐ ԿԱՆԽԱԳԾՈՒՄԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲԱՆԿԻ ԺՈՒԺԱՆԻՇԻԺ ԺԱՇՐ Է»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

առաջատարներից մեկը՝ զիջելով միայն Թուրքմենստանին, Ուզբեկստանին, Ղրղզստանին:

Ինչպես նշեց վարչապետը, Վրաստանում գործնականում էկոնոմիկա գոյություն չուներ, իսկ տնտեսական աճը ձեռք էր բերվում արհեստական խթանիչների միջոցով: «Մենք վերանայեցինք մի շարք աննպատակ եւ անիմաստ նախագծեր: Այդ նախագծերը առանձնապես շատ էին տարածաշրջանային զարգացման եւ ենթակառույցների նախարարության ոլորտում, թեպետ նույնիսկ նման եզրակացությունից հետո, գերատեսչության կողմից ծախսվեց 150 միլիոն լարի ավելի, քան 2012 թվականին»,- հայտարարեց Իրակլի Ղարիբաշվիլին՝ հավելելով, որ էկոնոմիկայի աճի տեմպի նվազեցմանը «նպաստեց» նաեւ կոհաբիտացիայի գործընթացը:

Ղարիբաշվիլու տեղեկատվությամբ, իրավիճակը էականորեն փոխվեց հոկտեմբեր-նոյեմբերին, երբ նկատվեց տնտեսական ակտիվություն, եւ այդ ֆոնի վրա 2014 թվականի համար կառավարության կանխագծած 5 տոկոսանոց աճը իրատեսական է:

ՎԱՐՉԱՊԵՏԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ԺՈՒԺԱՆԻՇՆԵՐԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

անցյալ տարի կարկտահարումների ծավալն ավելացել է շուրջ 20 տոկոսով, իսկ բացասական վճարումների բացասական հաշվեկշիռը նվազել է 500 միլիոն դոլարով, ինչը հուսադրող է: Ֆինանսների նախարարը քննադատեց այն փորձագետների պնդումները, որ լարիի արժեզրկումը պայմանավորված է բյուջեում ծագած հիմնախնդիրներով, եւ դրանով կառավարությունը դյուրությամբ է համալրելու բյուջեն: «Նախ ցանկանում եմ ասել, որ ինձ զարմացնում են այն մարդիկ, ովքեր իրենց համարում են փորձագետներ եւ հայտարարում են, որ դեկտեմբերին, լարիի արժեզրկմամբ, մենք փորձում էինք համալրել բյուջեն: Դա բացահայտ սուտ է: Ազգային տարադրամի կուրսի բարձրացումն ավելացնում է կառավարության ծախսերը: Ավելանում են նաեւ արտաքին պարտքի սպասարկման գումարը, եւ դա բյուջեի եկամտային մասի հետ ոչ մի կապ չունի»,- հայտարարեց Խադուրին:

ՕՐԵՆՍԴԻՐ

ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔԸ ԿԸՆԴՈՒՆՎԻ ՓԵՏՐՎԱՐԻՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

խատակարգի համաձայն, խորհրդարանը մինչեւ փետրվարի վերջն ընդունել է բոլոր այն որոշումները, որոնք կապված են ինքնակառավարման հետ: «Մենք չենք կարողանա կատարել խոստումը, քանի որ բոլոր հարցերը կլուծվեն մինչեւ ընտրությունները: Մենք դա գիտակցում ենք եւ համարում մեր բացթողումը: Ժամանակի առումով, մենք չենք հասցնում եվրոպական չափորոշիչներին, թեպետ դրանք գերազանցում են ներկայացված վրացական չափորոշիչները»,- հայտարարեց Դավիթ Ուսուփաշվիլին:

ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԳՈՏԻ

ՌՈՒՍՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ ՀԱՍՑՐԵՑԻՆ ՄԻՆՉԵՎ ԳԱԳՐԱ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

յին ամբողջականության դեմ նման ոտնձգության հետ: «Մենք Ռուսաստանին կոչ ենք անում պաշտպանել միջազգային նորմերը եւ միջազգային հանրությանը խնդրում արձագանքել այդ սույն փաստի կապակցությամբ»,- ընդգծեց նա:

Վերոնշյալ թեմայով հատուկ հայտարարությամբ հանդես եկավ նաեւ Վրաստանի ԱԳ նախարարությունը: «Վրաստանի ինքնիշխան տարածքում, առանց հանրապետության կառավարության համաձայնության, սահմանային գոտու ստեղծումը եւս մեկ ոտնձգություն է Վրաստանի տարածքային ամբողջականության ու ինքնիշխանության դեմ եւ Ռուսաստանի կողմից իր միջազգային պարտավորությունների, միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքների ու հրադադարի համաձայնագրի կոպիտ խախտում է»,- հայտարարեց Վրաստանի ԱԳ նախարարությունը:

Համաձայն ընդունած որոշման, այն անձինք, ովքեր հունվարի 20-ից մինչեւ մարտի 21-ն ընկած ժամանակահատվածում կմտնեն «սահմանային գոտի», պետք է իրենց հետ ունենան ինքնությունը հավաստող փաստաթղթեր: Բաղրիփշ գյուղում, որը գտնվում է 11-րդ կիլոմետրի վրա, կստեղծվի «ստացիոնար վերահսկիչ կետ», որը համալրված կլինի աբխազական կողմի Անվտանգության ծառայության, ներքին գործերի նախարարության եւ Միգրացիայի ծառայության աշխատակիցներով:

Գագրա քաղաքն ինքը կմնա գոտու սահմաններից դուրս:

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՈՒՂՂՎԱԾ ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՏԵԳՐՄԱՆ ԱՐԱԳԱՑՄԱՆԸ

Հունվարի 22-23-ին «Բազմազգ Վրաստան» ոչ կառավարական կազմակերպության ներկայացուցիչները «Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության եւ նրանց քաղաքացիական ինտեգրման պետական քաղաքականության ուղղությունների կատարելագործման ու մշակման հարցում կառավարությանը աջակցություն» նախագծի շրջանակներում, հանդիպում ունեցան հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետնախարար Պաատա Զաքարեիշվիլու եւ մշակույթի ու հուշարձանների պաշտպանության նախարար Գուրամ Օդիշարիայի հետ:

Ինչպես հայտարարեցին կազմակերպությունում, նախագծի նպատակն է աջակցություն ցուցաբերել «Հանդուրժողականության եւ քաղաքացիական ինտեգրման ազգային հիմնադրույթով» սահմանված ծրագրի իրականացման համար համապատասխան նախարարություններին, որպեսզի վերջիններս իրենց գործառույթի շրջանակներում մշակեն նոր միտումներ, գաղափարներ եւ կոնկրետ գործողություններ՝ ուղղված ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությանը եւ նրանց քաղաքացիական ինտեգրման արագացմանը:

Հանդիպման ավարտին, կողմերն ակտիվ համագործակցության պատրաստակամություն հայտնեցին: Պատրասկամություն հայտնվեց նաեւ պետական գերատեսչությունների հետ միասին մշակել գործողությունների ծրագիրը, որտեղ մանրամասն կնշվեն այն ակտիվությունները, որոնք կոնկրետ նախարարությունները իրականացնելու էին վերոնշյալ նախագծի շրջանակներում:

ՎԱՐԿԵՐ

ՈՒԺԻ ՄԵՋ ԿՄՏՆԻ ՀԻՊՈԹԵՔԱՅԻՆ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԻ ՆՈՐ ՁԵՎԱՉԱՓԸ

Ընթացիկ տարվա հունվարի 28-ից ուժի մեջ կմտնեն հիպոթեքային եւ վարկային համաձայնագրերը կարգավորող խորհրդարանի կողմից ընդունած նոր չափորոշիչները:

Այդ կապակցությամբ, քաղաքացիական օրենսգրքում եւ վարույթի կատարման մասին օրենքում կատարած փոփոխությունները հրապարակվել են «Օրենսդրական տեղեկատուում»: Վարկային համաձայնագրերի ապահովման նպատակով, հիպոթեքի մասին պայմանագրի նոտարական հաստատումը դառնում է պարտադիր, թեպետ այդ սահմանափակումը կոմերցիոն բանկերի, միկրոֆինանսական կազմակերպությունների, ոչ բանկային դեպոզիտային հաստատությունների՝ վարկային միությունների եւ որակավորված վարկային ինստիտուտների վրա չի տարածվում: Նոտարը պարտավոր է կողմերին պարզաբանել իրավունքներն ու պարտավորությունները եւ իրավական այն հետեւանքները, որոնք կծագեն պայմանագրի պայմանների խախտման դեպքում:

Հիպոթեքայով ապահովված վարկային պայմանագրի վրա սահմանվում է տոկոսադրույքի վերին սահմանը: Ինչ վերաբերում է աճուրդով սեփականության ստիպողական վաճառքին, ապա դրան համապատասխանող փոփոխությունները կատարվել են վարույթի կատարման մասին օրենքում: Դրանք նախատեսում են մեկ կամ երկու կրկնակի աճուրդների անցկացում:



ՈՒԿՐԱԻՆԱ

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՀՐԱԴԱՐ ԿՈՂՄԵՐԻ ՄԻՋԵՎ

Դեռեւս անցյալ տարվա նոյեմբերից, Ուկրաինայի կառավարության կողմից Եվրամիության հետ համաձայնագրի հրաժարումից հետո, Ուկրաինայում սկսված զանգվածային ելույթները չեն դադարում: Ավելին, հունվարի 19-ին Կիեւում եւ Ուկրաինայի մյուս քաղաքներում տեղի ունեցան ընդհարումներ իրավապահների ու ցուցարարների միջեւ: Կան զոհեր եւ վիրավորներ: Զոհվածների թվում է հայազգի Սամվել Նիգոյանը:

Քաղաքական ճգնաժամի կարգավորման նպատակով, հունվարի 23-ին տեղի ունեցավ Ուկրաինայի նախագահ Վիկոր Յանուկովիչի հանդիպումը ընդդիմության առաջնորդներ Վիտալի Կլիչկոյի, Արսենիյ Յացենյուկի եւ Օլեգ Տյագնիբոկի պետ: Բանակցությունները շարունակվել են ավելի քան չորս ժամ:

Բանակցությունների ավարտից հետո, «Բատկիվշչինա» խմբակցության ղեկավար Արսենիյ Յացենյուկը եւ «Ազատություն» կուսակցության ղեկավար Օլեգ Տյագնիբոկը ցուցարարներին հայտարարեցին, որ համաձայնություն է ձեռք բերվել հրադադարի շուրջ. նախագահը երաշխիքներ է տվել, որ իրավապահ ուժերը չեն գրոհի ցուցարարների վրա, իսկ ընդդիմության բոլոր կալանավորված ակտիվիստները ազատ կարձակվեն երեք օրվա ընթացքում: Իր հերթին, ՈՒԴԱՌ կուսակցության առաջնորդ Վիտալի Կլիչկոն կոչ է արել Ուկրաինայի բնակիչներին սկսել համընդհանուր գործադուլ:

ՌՈՒՍԱՍՏԱՆ

ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ռուսաստանի Դաշնությունում 2014թ. հունվարի 1-ից ուժի մեջ են մտել «ՌԴ-ից ելքի եւ ՌԴ մուտքի մասին» ու «ՌԴ-ում օտարերկրյա քաղաքացիների իրավական կարգավիճակի մասին» դաշնային օրենքներում կատարված փոփոխությունները: Համաձայն նոր կարգի, 2014թ. հունվարի 1-ից սկսած, ՌԴ առանց վիզա մուտքի իրավունք ունեցող պետությունների (այդ թվում՝ Հայաստանի) քաղաքացիները կարող են ՌԴ տարածքում մնալ 90 օր՝ յուրաքանչյուր 180 օրվա ընթացքում: Դա նշանակում է, որ այդ պետությունների քաղաքացիները, Ռուսաստանում 90 օր գտնվելուց հետո, այլեւս չեն կարող հատել Ռուսաստանի սահմանը եւ անմիջապես հետ վերադառնալ, ինչպես դա անում էին նախկինում:

Անհրաժեշտ է հաշվի առնել, որ վերոհիշյալ կարգը խախտողների համար սահմանվել է ՌԴ մուտք գործելու արգելք՝ 3 տարի ժամկետով:

ԵՄ

ՎԵՐԱՀԱՍՏԱՏՎԵԼ Է ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՍՏՈՐԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ

Ուկրաինայում ստեղծված իրավիճակի վերաբերյալ քննարկումների արդյունքում, Եվրոպական միության խորհուրդը հանդես է եկել հայտարարությամբ: Բրյուսելը կոչ է արել ուկրաինական իշխանություններին չեղյալ հայտարարել նախօրեին ընդունված 16 օրենքները եւ վերահաստատել Ասոցիացման պայմանագիրը ստորագրելու պատրաստակամությունը:

ԵՄ խորհուրդն ընդգծել է, որ նշված օրենսդրական ակտերը նշանակալիորեն «կսահմանափակեն Ուկրաինայի քաղաքացիների հիմնարար իրավունքները, մասնավորապես՝ ՁԼՄ-ների, խոսքի եւ հավաքների ազատությունների ոլորտներում»:

Միաժամանակ, կապված Կիեւում վերջին զարգացումների հետ, Բրյուսելը կոչ է անում «բոլոր կողմերին համակողմանի երկխոսության միջոցով ժողովրդավարական ելքեր գտնել ստեղծված քաղաքական ճգնաժամից»: ԵՄ խորհուրդը վերահաստատել է նաեւ Ուկրաինայի հետ քաղաքական ասոցիացիայի եւ տնտեսական ինտեգրացիայի շարունակականության վերաբերյալ իր հանձնառությունը:

Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ԲԱՐԵՓՈԽՈՒՄ

ՆՈՐ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԿՍԱՀՄԱՆԱՓԱԿԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վրաստանում շարունակվում է պետական կառավարման համակարգի բարեփոխումը, որը, 2013 թվականի նոյեմբերին Գիորգի Մարգվելաշվիլու երկրի նախագահ ընտրվելուց հետո, ուժի մեջ մտած նոր Սահմանադրության համաձայն, նախատեսվում է նախագահի իրավասությունների սահմանափակում եւ դրանց բաշխում խորհրդարանի ու կառավարության միջեւ:

Ինչպես տեղեկացրել է կառավարության մամլո ծառայությունը, վերոնշյալ հիմնադրույթի իրականացման շրջանակներում, մի շարք կառուցվածքա-գործառույթային փոփոխությունների կատարումից հետո, Վրաստանի կառավարական գրասենյակը կվերածվի կառավարական վարչակազմի:

«Գրասենյակի վերակարգավորումը կիրականացվի հանրային կառավարման եվրոպական մոդելի հիման վրա: Վարչակազմը սերտորեն կհամագործակցի հասարակական կազմակերպությունների, ինչպես նաեւ վրաց եւ օտարերկրյա փորձագետների հետ: Կուժեղացվեն վարչապետին առընթեր արդեն իսկ գործող խորհուրդները, եւ կստեղծվեն նոր միավորներ»,- ասված է մամլո ծառայության հաղորդագրության մեջ:

Գրասենյակի բարեփոխումը մի կողմից պայմանավորված է այլ սահմանադրական փոփոխություններով, որոնք ընդլայնում են վարչապետի իրավասությունները, մյուս կողմից ուղղված են կառավարման եվրոպական չափորոշիչների շրջանակներում արդյունավետության բարձրացմանը:

Վարչակառավարման նոր կառույցի շնորհանդեսը, որը ձեւավորվելու է Վրաստանի կառավարության կազմում, ծրագրվում է անցկացնել մոտ ժամանակներում երկրի նախագահի, խորհրդարանի ղեկավարների եւ կառավարության անդամների մասնակցությամբ:

Այդ ժամանակ էլ հանրությանը կներկայացվի 2014 թվականի համար կառավարության գործողության ծրագիրը:

ՎՐԱՍՏԱՆ-ԱՄՆ

ԱՄՆ ԿՈՆԳՐԵՍԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Հունվարի 19-ին Վրաստան ժամանեց ԱՄՆ Կոնգրեսի պատվիրակությունը, որի կազմում էին սենատորներ Ջեյմս Ինհոֆը, Ջոն Բուզմանը, կոնգրեսմեններ Բեռն Բյուկենենը, Էդդի Կրենշոն, էն Կիրկպատրիկը, Սթիվեն Պիրսը:

Այցի շրջանակներում, ԱՄՆ Կոնգրեսի ներկայացուցիչները հանդիպում ունեցան Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլու, վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու, ընդդիմադիր «Ազգային շարժում» կուսակցության լիդերների հետ:

Նախագահի հետ հանդիպմանը, կողմերը քննարկեցին անվտանգության ոլորտում եւ հակաահաբեկչական գործողություններում համագործակցության խորացման հետ կապված հարցերը:

Վարչապետի հետ հանդիպմանը առանձնակի ուշադրություն հատկացվեց վրաց-ամերիկյան ռազմավարական հարաբերությունների խորացման հարցերին: Ընդդիմության լիդերների հետ հանդիպմանը, ամերիկյան կոնգրեսի ներկայացուցիչները քննարկեցին տեղական ինքնակառավարման առաջիկա ընտրությունների, երկրի արտաքին քաղաքական կուրսի հետ կապված հարցեր:

62 ՄԻԼԻՈՆ ԴՈԼԱՐ՝ ԵՎՐԱԻՆՏԵԳՐՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Եվրամիության հետ ասոցիացման ծրագրի կատարման համար, Միացյալ Նահանգները Վրաստանին հատկացրել են 62 միլիոն դոլար:

Ինչպես տեղեկացրել է Վրաստանի ԱԳ նախարարությունը, վերոնշյալ գումարը նախատեսվում է ներառել 2014 թվականի ֆինանսական ծրագրում:

Գումարի հատկացման մասին որոշումը ԱՄՆ կոնգրեսն ընդունել էր հունվարի 15-ին: Որոշումը պաշտպանվել էր նաեւ ԱՄՆ Սենատի կողմից:

Ընդունած որոշման համաձայն, ԱՄՆ պետքարտուղար Ջոն Քերին մշակելու է զեկուցագիր Ռուսաստանի կողմից «Արեւելյան գործընկերության» երկրների վրա Եվրաինտեգրման գործընթացի դադարեցման նպատակով, իրականացվող ճնշման մասին:

Վրաստանի ԱԳ նախարարությունն ընդգծում է ԱՄՆ-ի կողմից ծախսերի կրճատման ֆոնի վրա նշանակալից գումարի հատկացման նշանակությունը: Դա կրկին անգամ հավաստում է այն փաստը, որ ԱՄՆ-ը Վրաստանին ընկալում է որպես նշանակալի եւ ռազմավարական գործընկեր»,- ասված է ԱԳ նախարարության հաղորդագրության մեջ:

ԿՐԹԱԿԱՆ

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՍԿՍՈՒՄ Է ԴՊՐՈՑԱԿԱՆ ՄԱՆԴԱՏՈՒՐՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄԸ

Վրաստանի կրթության նախարարությունը ծեռնամուխ է եղել դպրոցական մանդատուրների ծառայության բարեփոխմանը:

Ինչպես հայտարարեց Վրաստանի կրթության եւ գիտության նախարար Թամար Սանիկիձեն, այն վերափոխվելու է երեխաների պաշտպանության մեդիացիայի եւ հոգեբանական օգնության ծառայության, իսկ մանդատուրները կկոչվեն երեխաների պաշտպանության սպաներ: Փոխվում է նաեւ սպանների տարիքային ցենզը: Եթե մանդատուրներ կարող էին նշանակվել 20 եւ ավելի տարիք ունեցող անձինք, ապա երեխաների պաշտպանության սպաները կնշանակվեն 23 տարեկան հասակից:

Համապատասխան փոփոխությունները կատարվում են ընդհանուր կրթության մասին օրենքում եւ մասնագիտական կրթության մասին օրենքում: Օրենսդրական նախաձեռնությունն արդեն ներկայացվել է խորհրդարանի քննարկմանը:

Փոփոխության համաձայն, երեխաների պաշտպանության սպաների գործառույթներն ու լիազորությունները չեն սահմանափակվի միայն դպրոցներում կարգուկանոնի վերահսկմամբ եւ դեռահասների շրջանում իրավախախտումների կանխմամբ: Դրանց կավելացվի նաեւ հոգեբանական օգնության ցուցադրումը: Երեխաների պաշտպանության սպաների գործառույթում կներառվի նաեւ մասնագիտության ընտրության ժամանակ անչափահասին օգնության, հոգեբանական եւ սոցիալական օգնության հոգեբանական փորձաստուգումների անցկացման եւ փորձագիտական եզրակացության հանձնման գործառույթները:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

ԿՏՐՈՒԿ ՆՎԱԶԵԼ Է ԿԵՍԱՐՅԱՆ ՀԱՏՈՒՄՆԵՐԻ ԹԻՎԸ

Պետության կողմից իրականացվող վերահսկողության արդյունքում, կեսարյան հատումների թիվը 60-ից հասցվել է 30 տոկոսի:

Այդ մասին հայտարարեց Վրաստանի առողջապահության նախարար Դավիթ Սերգեյենկոն: Նրա խոսքերով, համընդհանուր առողջապահության ծրագրի եւ կեսարյան հատումների արձանագրության հաստատումից հետո, ծննդաբերողների մոտ կեսարյան հատումների թիվը 60-ից հասցվել է 30 տոկոսի:

Նախարարն անդրադարձավ նաեւ արհեստական վիժումների հարցին՝ հայտարարելով, որ մայրության եւ երեխաների խորհրդում կայացած հանդիպմանը մշակվել է փաստաթուղթ եւ մոտ ժամանակներում դա թույլ կտա կարգավորել վերոնշյալ հարցը:

Հիշեցնենք, որ դեռեւս անցյալ տարվա սեպտեմբերին հաստատվել էր կեսարյան հատումների ազգային արձանագրությունը, որով սահմանվում էին, թե բժշկական որ տվյալների առկայության պայմաններում է թույլատրելի կեսարյան հատումը: Վերոնշյալ հիմնադրույթը պարտադիր է բոլոր ծննդատների համար: Այն ժամանակ, Սերգեյենկոն հայտարարել էր, որ կեսարյան հատումների թիվը աննախընթաց բարձր է, եւ նախարարությունը նպատակամղվածորեն գործելու է դրա նվազեցման ուղղությամբ:



ԿՐՃԱՏՎՈՒՄ Է ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՀԱՎԵԼԱՎՃԱՐԸ

Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու հրամանագրով, նախարարների աշխատավարձը՝ հավելավճարի հետ միասին, 6300-ի փոխարեն, կկազմի 5000 լարի:

Վարչապետի մամլո ծառայության տեղեկատվությամբ, հավելավճարի հետ նախարարների աշխատավարձի նվազեցումը կապված է այդ թեմայով հասարակությունում ծագած բազում հարցերի հետ:

ԾՐԱԳՐՎՈՒՄ ԵՆ ԳԱԶԻՖԻԿԱՑՄԱՆ ՄԱՍՇՏԱԲԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԵՐ

Ինչպես հայտարարեց Վրաստանի տարածաշրջանային զարգացման եւ ենթակառույցների նախարար Դավիթ Նարմանիան, 2014 թվականի համար ենթակառույցային նախագծերի իրականացման որոշումն արդեն ընդունվել է եւ գտնվում է մշակման փուլում: «Այս տարի գազիֆիկացման նախագծերը ամենամասշտաբայինն են: Նշանակալից են նաեւ ջրամատակարարման համակարգերի եւ ներքին ճանապարհների կարգավորման նախագծերը: Հակամարտության գոտու երկայնքով գտնվող գյուղերում կբացվի 13 ամբուլատորիա: Այդ հարցն արդեն լուծվել է, եւ արդեն տարվում են համապատասխան աշխատանքներ»,- հայտարարեց Դավիթ Նարմանիան: Նրա խոսքերով, ներկա դրությամբ, աշխատանքներ են տարվում նախագծերի տնտեսական բաղադրիչների հստակեցման ուղղությամբ:

ԴԱԴԱՐԵՑՎԵԼ Է «24 ՍԱԱԹԻ» ԹԵՐԹԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄԸ

«24 սաաթի» թերթը, 2013 թվականի դեկտեմբերի 31-ի հրատարակած համարից հետո, դադարեցրել է աշխատանքը: Ինչպես հայտարարեց պարբերականի գլխավոր խմբագիր Պաատա Վեշապիձեն, ծրագրվում է թերթի վերափոխում, որից հետո նա չի լինի ամենօրյա, այլ հավանական է՝ ունենա վերլուծական ձեւաչափ: Վեշապիձեի խոսքերով, ներկա փուլում մեծ ուշադրություն է հատկացվում թերթի էլեկտրոնային տարբերակին եւ մոտ ժամանակներս կգործարկվի նոր կայք-էջը:

ԲԻՁԻՆԱ ԻՎԱՆԻՇՎԻԼԻՆ ՀԻՄՆԵՑ ՈՉ ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Վրաստանի նախկին վարչապետ Բիձինա Իվանիշվիլին հիմնել է ոչ կառավարական նոր «Քաղաքացի» կազմակերպությունը: Նորաստեղծ կազմակերպությունը ղեկավարելու է անձամբ Իվանիշվիլին: Նոր կազմակերպության նպատակն է ամրացնել քաղաքացիական հասարակությունը:

Ինչպես տեղեկացրել է Իվանիշվիլու մամլո կենտրոնը, նոր կազմակերպության նպատակների եւ խնդիրների մասին տեղեկատվությունը Իվանիշվիլին մանրամասը կներկայացնի հունվարի 28-ին վրացական եւ միջազգային լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ:

«TV 3» ՀԵՌՈՒՍՏԱԼԻՔԸ ՆՈՐ ՂԵԿԱՎԱՐ ՈՒՆԻ

«TV 3» հեռուստաընկերության հիմնադիրներ Լաշա Չխենկելու, Դավիթ Մժավիայի, Լալի Էգաձեի եւ Կախա Բայինդուրաշվիլու որոշմամբ, Գրիգորի Բայբուրթը հեռուստաընկերության գլխավոր տնօրենի պաշտոնում փոխարինեց Կախա Բայինդուրաշվիլուն:

Նշենք, որ Գրիգորի Բայբուրթը 2010-2012 թվականներին եղել է Վրաստանի ֆինանսների փոխնախարար:

ԲՆԱԳԱՎԱՌ

ՆՈՐ ՆԱԽԱԳԻԾ՝ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

ՓԵՏՐՎԱՐԻՑ ԿՄԵԿՆԱՐԿԻ ՍԱԿԱՎԱՀՈՂ ՖԵՐՄԵՐՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Վրաստանի գյուղատնտեսության նախարարության նախաձեռնությամբ, գյուղատնտեսական նախագծերի կառավարման գործակալությունը ձեռնամուխ է եղել «գյուղատնտեսական մթերքների վերամշակման ձեռնարկությունների համաֆինանսավորման» նոր նախագծի իրականացմանը:

Պետական բյուջեի կողմից ֆինանսավորվող նախագծի նպատակն է գյուղանտեսական մթերքների վերամշակման նոր ձեռնարկությունների հիմնում տնտեսական նվազ ակտիվության շրջաններում եւ նախկին՝ ներկայումս պարապուրդի մատնված, ձեռնարկությունների վերականգնում:

Նախագծին մասնակցելու համար շահագրգռված անձինք պետք է բիզնես առաջարկություններով դիմեն գյուղատնտեսական նախագծերի կառավարման գործակալությանը, որը դրանք կքննարկի՝ սահմանված չափորոշիչներով եւ ելնելով նախագծի նպատակներից:

Ընտրված առաջարկությունները կմշակվեն եւ կներկայացվեն գրանտային կոմիտե: Դրական պատասխանի դեպքում, ձեռներեցները ֆինանսական օգնություն կստանան: Նախագծի լրիվ համաֆինանսավորումը կկազմի 200 հազարից մինչեւ 1 միլիոն դոլար:

Ձեռներեցի ֆինանսական համամասնակցությունը կազմելու է նախագծի արժեքի առնվազն 10 տոկոսը, իսկ գյուղատնտեսական նախագծերի կառավարման գործակալության համաֆինանսավորման առավելագույն չափը 40 տոկոս է, մնացած 50 տոկոսը ձեռներեցն ստանալու է ֆինանսական ինստիտուտներից:

Հաստատված վարկը ձեռներեցը կարող է օգտագործել սարքավորման, շինության ձեռքբերման, ձեռնարկության շինարարության եւ վերանորոգման աշխատանքների կատարման համար: Նախագծի շրջանակներում, ծրագրված է ագրովարկ-լիզինգի պայմանը: Լիզինգը ներառում է նախագծի արժեքի առավելագույն 50 տոկոսը, իսկ տարեկան տոկոսադրույքը, գյուղատնտեսական նախագծերի կառավարման գործակալության համաֆինանսավորման դեպքում, կազմում է 12 տոկոս:

Նախագծի շրջանակներում, չեն ֆինանսավորվի գինեգործության, սպիրտային եւ ալկոհոլային խմիչքների արտադրության, ցորենի ալյուրի արտադրության հաստատությունները:

Ձեռներեցի կողմից բանկային վարկի վճարման դյուրացման եւ ձեռնարկության ծախսերի նվազեցման նպատակով, նախագծով սահմանվել է առավելագույն տոկոսադրույք, որի հիմնական մասը վճարում է գործակալությունը: Մասնավորապես, 100 հազարից մինչեւ 200 հազար դոլար վարկի դեպքում, բանկային տոկոսադրույքը կկազմի առավելագույնը 14 տոկոս, որից 2 տոկոսը մարելու է սպառողը, 200 հազարից մինչեւ 500 հազար դոլար վարկի դեպքում, բանկային տոկոսադրույքը կկազմի առավելագույնը 13 տոկոս, որի 1 տոկոսը մարելու է սպառողը: Վարկի առավելագույն ժամկետը կազմում է 120 ամիս:

Վրաստանի գյուղատնտեսության նախարար Շալվա Փիփիան հայտարարեց, որ արդեն փետրվարին կմեկնարկի սակավահող ֆերմերների աջակցության ծրագիրը, եւ դրանից կկարողանան օգտվել 800 հազար ֆերմերներ:

Նախարարի խոսքերով, նախագիծը կֆինանսավորվի պետական բյուջեից: «Նախագծից կարող են օգտվել այն ֆերմերները, ում տնօրինության տակ կա 1,25 հեկտար գյուղատնտեսական նշանակության հողատարածք, որտեղ աճեցվում են միամյա կամ բազմամյա մշակաբույսեր: Ֆերմերները, ըստ հողատարածքների, բաժանվում են երկու խմբի եւ կստանան տարբեր ֆինանսավորում»,- հայտարարեց նախարարը՝ հավելելով, որ հողի մշակման համար ֆերմերները կստանան գյուղատնտեսական քարտեր, իսկ գյուղատնտեսական արտադրանքի գնման համար նրանք կօգտվեն պլաստիկ քարտերից, այսպես կոչված՝ «ագրոքարտերից»:

Նախարարի պարզաբանմամբ, գարնանային աշխատանքները կկատարեն «Մեխանիզատոր» ՍՊԸ-ն եւ 117 պայմանագրային ընկերությունները:

Նախագծի համար հատկացվել է 90 միլիոն լարի, եւ փետրվարի մեկից այն կշարունակվի մինչեւ օգոստոսը:

Նշենք, որ նախորդ տարվա համեմատությամբ սույն նախագծով հատկացված գումարը բավականին կրճատվել է: Անցյալ տարի այդ նպատակով հակտացվել էր 195 միլիոն լարի: Պարզաբանելով նախագծի բյուջեի կրճատումը Շալվա Փիփիան նշեց. «Անցյալ տարի նախագծի շրջանակներում շուրջ 53 միլիոն լարի ծախսվեց գյուղատնտեսական գործիքների եւ սարքերի ձեռքբերման համար: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ այդ գործիքներն ու սարքերը այս եւ հաջորդ տարիներին հնարավոր կլինի օգտագործել, հետեւաբար դրանց կրկնական ձեռքբերումը իմաստ չունի»:

Նախարարի պարզաբանմամբ հատկանշական է եւս մի հանգամանք. եթե անցյալ տարի վերոնշյալ նախագծի շրջանակներում առանձին ֆերմերներ չկարողացան օգտվել պետական օգնությունից, ապա այս տարի ցուցակները հստակեցվել են եւ բոլոր ֆերմերները, առանց բացառության կունենան նախագծով սահմանված արտոնություններից օգտվելու հնարավորություն:

ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆ

ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՇՆՈՐՀՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎՆԵՐԻՆ

Հունվարի 27-ից գյուղատնտեսական կոոպերատիվների զարգացման գործակալությունը սկսում է գյուղատնտեսական կոոպերատիվների կարգավիճակի շնորհման գործընթացը:

Այդ մասին հայտարարեց գործակալության նախագահ Գիորգի Միշելիձեն:

«Կարգավիճակի ստացման համար շահագրգռված անձինք գործակալությանը պետք է դիմում եւ համապատասխան փաստաթղթերը ներկայացնեն: Դրանք են՝ իրավասությունները հաստատող փաստաթուղթը, գյուղատնտեսական կոոպերատիվի կանոնադրությունը: Մեր գործակալությունը մշակել է կանոնադրության հանձնարարական ձեւաթուղթը, ինչը կդյուրացնի ֆերմերների համար կարգավիճակի ստացումը եւ կնպաստի արդյունավետ աշխատանքի իրացմանը»,- հայտարարեց Միշվելաձեն:

Նրա խոսքերով, մոտ օրերս կգործարկվի գյուղատնտեսական կոոպերատիվների զարգացման գործակալության պաշտոնական **www.acda.gov.ge.** էջը: Ընթացակարգի դյուրացման նպատակով, գործակալությունն ծրագրում է ներդնել էլեկտրոնային սպասարկումներ, որից հետո ֆերմերները կկարողանան դիմումները ներկայացնել օնլայն կարգով:

ՎՐԱՍՏԱՆ-ՌՈՒՍԱՍՏԱՆ

ԶՈՒՐԱԲ ԱԲԱՇԻՋԵ.«ՀԱՆԴԻՊՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՎԱՆԱԲԱՐ ԿԶՐՈՒՑԵՆՔ ՊՈՒՏԻՆԻ ՀԱՅՏՆԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ»

Ռուսաստանը ե՞րբ կվերացնի վիզային ռեժիմը

Վրաց-ռուսական կապերի բարդությունների եւ հեռանկարների մասին մեզ հետ զրուցում է Վրաստանի վարչապետի հատուկ ներկայացուցիչ Ռուսաստանի հետ փոխհարաբերությունների հարցերով Զուրաբ Աբաշիձեն:

- Հետաքրքիր է՝ Ձեր հանդիպումը Ռուսաստանի արտաքին գործերի նախարարի տեղակալ Գրիգորի Կարասինի հետ ինչո՞ւ է ծրագրվել փետրվարի վերջին-մարտի սկզբներին, Սոչիի օլիմպիական խաղերի ավարտից հետո:

- Հենց սկզբից այդպես էր որոշված, մեր հանդիպումները որոշակի ընդմիջումով էին տեղի ունենում, մոտավորապես, 2-3 ամիսը մեկ ենք հանդիպում միմյանց: Վերջին հանդիպումը կայացավ նոյեմբերի վերջին, օլիմպիական խաղերն էլ կավարտվեն, եւ հերթական բանակցությունը կկայանա Պրահայում:

- Հնարավո՞ր է, արդյոք, որ Սոչիի՝ Վրաստանի սահմանին մոտ գտնվելու պատճառով, օլիմպիական խաղերի ընթացքը որոշ շտկումներ մտցնի ծրագրված հանդիպման օրակարգում:

- Հուսով ենք, օլիմպիական խաղերը կանցնեն խաղաղ: Վրացական կողմը պատրաստակամություն հայտնեց Ռուսաստանի հետ զրուցել եւ, եթե պահանջ լինի, համագործակցել նաեւ օլիմպիական խաղերի անվտանգության թեմայի շուրջ: Նախատեսելով այն, որ տարածաշրջանը մեր սահմանին մոտ է գտնվում, եւ բացի այդ մեր օլիմպիական խումբը նույնպես մասնակցում է խաղերին, ակնհայտ է ու նաեւ մեզ համար շահեկան, որ ամեն ինչ անցնի առանց հասարակական կարգի խախտումների եւ անցանկալի անակնկալների: Ռուսական կողմը խոստացավ, որ Օլիմպիական խաղերին կմասնակցեն միայն այն խմբերն ու ներկայացուցիչները, որոնց ճանաչում եւ ընդունում է միջազգային օլիմպիական կոմիտեն, իսկ Աբխազիան եւ Հարավային Օսիան այդ թվում, բնականաբար, չկան:

- Վերջերս Ռուսաստանը Վրաստանի ավտոմոբիլային փոխադրողների համար պարզեցրեց վիզային ռեժիմը, թեեւ բազմակի օգտագործման այցեգիրը բավականին թանկ՝ 160 դոլար արժի: Պատրաստվո՞ւմ եք, արդյոք, հանդիպմանը բարձրացնել նաեւ Վրաստանի այլ քաղաքացիների համար վիզային ռեժիմի պարզեցման հարցը:

- Ինչպես ասում են մեր ռուս գործընկերները, Վրաստանի որոշ կարգի քաղաքացիների՝ բիզնեսմենների, լրագրողների, գիտնականների համար վիզաներ ստանալու ընթացակարգը մասամբ պարզեցվել է: Եթե առաջ Վրաստանից միայն ամենամերձավոր ազգականի հրավերն էր հնարավոր, ապա այժմ դրա շրջանակը լայնացել է: Նրանց իսկ վիճակագրությամբ ,անցյալ տարի նախորդ տարվա համեմատ, Վրաստանի քաղաքացիներին տրված վիզաների քանակը 40-50 %-ով աճել է, թեեւ վիզա ստանալը դեռեւս դժվար է: Վիզաները ընդհանրապես վերացնելու մասին խոսք մինչ օրս չի եղել, քանի որ ռուսական կողմը այն կապում է դիվանագիտական հարաբերությունների վերականգնման հարցի հետ, ինչն այս փուլում մեզ համար անընդունելի է: Հանդիպման ընթացքում հավանաբար կխոսենք Պուտինի հայտնի հայտարարության մասին՝ վիզաների հնարավոր վերացման վերաբերյալ, երեւի առավել կոնկրետ կդառնա, թե ինչ նկատի ուներ ռուսական կողմը: Ասեմ, որ Վրաստանն, իր հերթին, Ռուսաստանի հետ ունի անայցեգրային ռեժիմ:

- Ձեր կարծիքով, ի՞նչը դարձավ Պուտինի նման հայտարարության պատճառ այն դեպքում, երբ արտաքին գործերի նախարար Լավրովը հակառակ դիրքորոշում էր արտահայտում:

- Պուտինը նման բովանդակությամբ հայտարարություն արել է նաեւ նախկինում, որ եթե Վրաստանը իրենց հետ համագործակցի օլիմպիական խաղերի հարցով, ապա նա կվերանայի վիզային ռեժիմը:

- Ռուսաստանում բնակվում եւ աշխատում են հարյուրհազարավոր Վրաստանի քաղաքացիներ: Վերջերս Մոսկվայում եւ այլ քաղաքներում հաճախակի է դարձել աշխատելու նպատակով այստեղ եկած օտարերկրացիների հանդեպ բռնությունը: Ռուսաստանի պատվիրակության հետ հանդիպելիս՝ զրուցու՞մ եք մեր հայրենակիցների իրավունքների պաշտպանության մասին:

- Ռուսաստանում բնակվող վրացիների բացարձակ մեծամասնությունը Ռուսաստանի քաղաքացիներ են: Եվ այնտեղ անլեգալ գտնվող մեր քաղաքացիների մասին հոգ տանել այս փուլում մեզ համար հեշտ չէ, ոչ էլ դեսպանություն ունենք: Նման հարցերը հնարավորինս հոգում է Վրաստանի շահերի բաժինը, որը գործում է Մոսկվայում, Շվեյցարիայի դեսպանատանը:

- Հնարավո՞ր եք համարում մոտ ապագայում երկու երկրների միջեւ դիվանագիտական հարաբերությունների վերականգնումը:

- Մոտակա հեռանկարներում դա դժվար է պատկերացնել, սակայն եթե հակամարտող տարածաշրջանների հետ կապված երկու երկրների միջեւ հարաբերություններում մենք կարողանանք հասնել լուրջ առաջընթացի, ապա հնարավոր է, օրակարգում այս հարցն էլ քննարկվի:

- Ռուսաստանի Դաշնությունը շարունակում է ֆինանսապես օժանդակել Աբխազիայի եւ Հարավային Օսիայի ռեժիմները, զրուցելո՞ւ եք արդյոք այս հարցի շուրջ Պրահայում:

- Դա առաջին դեպքը չէ: Ռուսաստանն այս տարածաշրջաններին ֆինանսական, նյութական, ռազմական եւ տարատեսակ օգնություն ցուցաբերում է 1990-ական թվականներից, ինչը եղել է ու կա մեր հարաբերություններում առկա գլխավոր հիմնախնդիրներից մեկը: Սակայն այժմ, այն բանից հետո, երբ Ռուսաստանը ճանաչեց այս երկու տարածաշրջանների այսպես կոչված անկախությունը, գտնում են, որ ունեն դրա օրինական իրավունքը, ինչը անշուշտ միջազգային իրավունքի խախտում է համարվում: Աբխազիայի բյուջեի երկու երրորդը Ռուսաստանից ստացած տրանսֆերներն են կազմում: Առավել մեծ է Հարավային Օսիային տրվող օգնությունը: Նման հարցերի քննարկումն ավելի շատ ժամեի բանակցությունների արտոնությունն է, սակայն հնարավոր է՝ մենք եւս շոշափենք այս թեման:

ՄԱՐԻՆԱ ԹՈՐՈՍՅԱՆ